զգեստատանց վերանորոգութեան և եկեղեցական զգեստի վրայ ծախսուել է 2,074 հազար ռուբլի, կարմիր գինու (պատարագի բաժակ) ձէթի խունդի և նշխարքի համար ծախսուել է 3,295 հազար ռուբլի, ապահովագրութեանց համար 1,642 հազար ռուբլի, իսկ ընդամենայն 25,240 հազար ռուբլի կամ 60%. 2,074 հազար ռուբլի եկեղեցիների բարեզարդութեան համար, այսինքն իւրաքանչիւր եկեղեցու վրայ միջին թուով մօտ 48 ռուբլի, աւելի պակաս, քան կարմիր գինու (բաժակ) համար արուած ծախսը միջին թուով իւրաքանչիւր եկեղեցու հաշուին։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Աստուածաշնչի տարածումը 1913 թուին։ Աստուածաշնչի Ամերիկեան ընկերութիւն ունի Եգիպտոսի մէջ 26 գրավաճառ, Պուլկարիոյ մէջ 5, Թուրքիոյ մէջ 52, որոնք ճանապարհորդել են 71000 մղոն։ Նորա ցրել են 10,790 Աստուածաշունչ, 45,023 Նոր Կտակարան, 47,023 ս. Գրքի մասեր, ընդամենայն 76,379 օրինակ։ Սպառուած օրինակների թիւն է ամբողջ 1913 թուի մէջ 179,460, Իրենց հրատարակութեան օրից սկսած մինչև 1913 թ. դեկտ. 31-ը յիսուն և վեց տարուան մէջ տարածել են 3,489,308 օրինակ։ Լեզուական կողմից վերցրած—նոքա տարածել են Հայերէն 23,057, Հայատառ Տաճկերէն 13,416. Յունարէն 7,579. Յունատառ Տաճկ. 4,370, Պոլկարերէն 14,203, Տաճկերէն 10,727, Արաբերէն 89,973, Անգղիերէն 4,144 օրինակ։ Մնացածները այլ լեզուներով։

1912 թ. աշխարհի բոլոր Աստուածաշնչի ընկերութիւնների հրատարակած օրինակների թիւը.

Ամերիկեան ընկերութիւն	.	.	4,104.008 օրինակ
Բրիտանական »	.	.	10,400.229 »
Ֆրանսիական »	.	.	40,695 »
Գերմանական »	.	.	1,014,230 »
Հոլանդական »	.	.	85,757 »
Սկանդինաւիական »	.	.	152,898 »
Պելճիական »	.	.	51,494 »
Ընդամենայն			15,849,311 »

Բ. վ. Ա.